Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի օլիմպիադայի
մարզային փուլի – 2023-2024 ուս. տարի
/տևողությունը – 120 րոպե/
11-12 դասարան

1. Պնդումներից յուրաքանչյուրի համար նշել՝ ճիշտ է, թե՝ սխալ 2միավոր

ա. ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալը դրամական արտահայտությամբ գերազանցում է գյուղատնտեսական արտադրանքի ծավալին

բ. ՀՀ հանքարդյունաբերության կառուցվածքում շինանյութերի արդյունահանման ծավալը դրամական արտահայտությամբ գերազանցում է հանքարդյունաբերության այլ ճյուղերին

գ. ՀՀ մշակող արդյունաբերության կառուցվածքում սննդի արդյունաբերությունը դրամական արտահայտությամբ առաջատարն է

դ. ՀՀ գյուղատնտեսական մշակաբույսերից համախառն բերքով առաջատարը բանջարեղենն է

ե. Հանքարդյունաբերությունից խախտված հողերի վերականգնումը կոչվում է ռեկուլտիվացիա

զ. Ճահճացած հողերի մելիորացիան կոչվում է իռիգացիա

է. Անհող պայմաններում բույսերի աճեցումը պարարտ միջավայրերի կիրառմամբ կոչվում է հիդրոպոնիկ եղանակ

ը. Կանաչ երկրորդ հեղափոխությունը հայտնի է նաև կենսատեխնոլոգիական հեղափոխություն անվամբ

2. Նկարագրով որոշել պետությունը 1միավոր

Այդ թագավորությանը հաճախ անվանում են իր կազմում գտնվող վարչական միավորներից մեկի անունով: Ժամանակակից նավիգացիան հիմնվում է ծագումով հենց այս երկրի քարտեզագրի ստեղծած պրոյեկցիայի վրա: Այն եզակի երկրներից է, ուր գործադիր և օրենսդիր մարմինները, ինչպես նաև թագավորի նստավայրը պաշտոնական մայրաքաղաքում չեն:

3. Նշված եզրույթներից ո՞րը չի վերաբերում սալերի տեկտոնիկային 1միավոր

ա. ռիֆտ բ. սուբդուկցիա գ. դիվերգենցիա դ. ափվելլինգ

4. Ելնելով բերված աղյուսակի ծախս տողի տվյալներից՝ գծեք գետի տարեկան ջրագիրը (հիդրոգրաֆը) (1միավոր) և պատասխանեք հարցերին (յուր.՝ 1միավոր)

	Ամիսներ											
	Հ	Փ	Մ	Ա	Մ	Հ	Հ	Օ	Ս	Հ	Ն	Դ
Ծախս մ³/վրկ	2.64	2.67	2.89	5.01	5.37	3.27	2.62	2.51	2.93	3.19	3.1	2.85
Տեղումներ, մմ	18	19	26	38	61	66	45	36	27	45	30	22

ա. Ինչպիսի՞ կոռելյացիա է դիտվում գետի ծախսի և տեղումների միջև 1միավոր

բ. Ինպիսի՞ն է այս գետի սնումը, եթե այն մերձարևադարձային կլիմայական գոտում է 1միավոր

5. Խնդիրներ

ա. Ա երկրում մեկ տարվա ընթացքում բոլոր էլեկտրակայանները միասին այրել են 5մլն տ ածուխ, 2մլն կգ գազ և 4մլն կգ նավթ: Բ երկրում նույն ժամանակահատվածում օգտագործել են 4մլն տ ածուխ, 3մլն կգ գազ և 3մլն կգ նավթ: Որոշել երկրներից յուրաքանչյուրի արտադրած էլեկտրաէներգիայի քանակը, եթե նավթի ու գազի ջերմային գործակիցը ընդունել 1.5: 1միավոր

բ. Ա երկրի բնակչության թիվը 8մլն մարդ է: Մեկ տարվա ընթացքում բնակչության հավելաճը եղել է 105%, միգրացիայի մնացորդը՝ 20 հզ մարդ, իսկ միգրացիայի ծավալը՝ 60հզ մարդ: Որքա՞ն է կազմել բնակչության միգրացիայի ինտենսիվության գործակիցը՝ արտահայտած տոկոսով և որքա՞ն է եղել բնակչության բնական բացարձակ աճը: 1միավոր

6. Թվարկել

ա. 4 երկրներ, որոնք դեռևս պահպանում են կոմունիստական կարգը 1միավոր

բ. Բնության պահպանության միջազգային միության (Միջազգային) կարմիր գրքում գրանցված 4 կենդանատեսակ, որոնք հանդիպում են ՀՀ տարածքում 1միավոր

7. Դասավորել նշված երկրները ըստ տրանսպորտային ցանցի խտության ցուցանիշի աճող հաջորդականության՝ Մոնակո, Ավստրալիա, Ճապոնիա, ԱՄՆ 1միավոր

8. Բացատրել

ա. Վերջին տասնամյակներին հյուսիսատլանտյան ավազանում արևադարձային ցիկլոնների քանակը ավելացել է: Ներկայացրեք այդ միտումը պայմանավորող հիմնական պատճառները 1միավոր

բ. Զարգացած երկրներում վերջին տարիներին դիտվում է արդյունաբերական ձեռնարկությունները ՆԱԵ-ներից վերադարձնելու միտում: Ներկայացրեք դրա երկու հիմնական պատճառ 1միավոր

9. Դիտարկեք միտումը և պատասխանեք հարցերին

Ներկայացված է Եվրոպական միության 27 անդամների ներքին ջրային բեռնափոխադրումների միտումը 2010-2022թթ. ժամանակահատվածում:



ա. Որո՞նք են 2011թ., 2018թ., 2020թ. և 2022թ.-ից յուրաքանչյուրում բեռնափոխադրումների անկման պատճառը: Ներկայացնել առանձին-առանձին 1միավոր

բ. ԵՄ հետաքրքրված է ներքին ջրային տրանսպորտի դերի բարձրացման գործում: Ներկայացնել ԵՄ համար տրանսպորտի այս տեսակի մեծ կարևորության 2 պատճառ: 1միավոր

10. Բացատրել հասկացությունը և պատասխանել հարակից հարցերին

ա. Ի՞նչ են ագրոկլիմայական ռեսուրսները (0.25միավոր): Ի՞նչ է ակտիվ ջերմաստիճանների գումարը (0.25միավոր): Թվարկեք երկու վտանգավոր ագրոկլիմայական երևույթ (0.5միավոր):

բ. Ի՞նչ է համախառն ներքին արդյունքը (0.5միավոր) և ինչո՞վ է այն տարբերվում համախառն ազգային եկամտից (0.75միավոր):

11. Երկրների էլեկտրաէներգիայի արտադրության կառուցվածքի տրամագրերը համապատասխանեցնել քարտեզում նշված երկրներին (օր.՝ Ա-5) 2 միավոր





Առարկայական հանձնաժողովի նախագահ՝ Վ.Ասատրյան